

կողոս զնացաք ընդ իշխանին տեսանել: Եւ երեկոյիս ընդ Մղտեսի Տիլէկին ի Ղատուժ փաշան զնացաք ի հարսնիք նալուօղի դստերն:

Ի Զ-իս օր Գշի. Մղտեսի Մարկոսն Երուսաղէմայ ի մեր տունն եկաւ տանել զնշանն:

Յաւուրս յայտոսիկ ի քաղաքն Պուրսա մի կարգացող տաճկի եւ փեսայ դանիշմանի մեծի լեալ այր իմաստուն՝ ի Քրիստոս հաւատայ: Քանզի լեալ երբեմն ի ճանապարհի՝ երթալ ի Քեապէն իւրեանց, առնել զուխտն եւ զառնալ: Եւ անդ ի միտս իւր բերեալ թէ Ահա՛ արարի զուխտն մեր եւ անդ ինչ ոչ տեսի. երթայց եւս տեսից զԵրուսաղէմ եւ զուխտն քրիստոնէից: Եւ յուզի անկեալ երթայ յԵրուսաղէմ եւ տեսանէ զամենայն տնօրինական տեղիսն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Եւ օր Ճրագալուցի Զատիկի Յարուսթեան Տեսառն մերոյ Քրիստոսի, որ ելանէ լոյս ի Գերեզմանէն և լուսաւորէ զհաւատացեալս նորա, մտանէ անդ և տեսանէ զայտոսիկ: Եւ յայնմ ժամու ծագեալ լոյս մարդասիրութեան Քրիստոսի ի սիրտ նորա և լուռ լեալ հառաչէր ի խորոց՝ թէ ո՞րպէս լիցի քրիստոնեայ. և յետ լինելոյ ուխտին, երթայ ի քաղաքն իւր ի Պրուսա: Եւ ասէ զիրս սրտին ամուսնոյն իւրոյ մի ըստ միոջէ. եւ ամուսինն իւր էր զուստր էմիրի՝ ոչ հանդուրժեալ խօսից նորա, այլ յանդիմանէր զնա եւ ըսպառնայր մահացուցանել զնա, զուցէ մոռացի զբանն զոր լսէր անտի: Եւ նա ստէպ ստէպ ասէր զգրեալսն որ յԱւետարանին, զի կարգայր նա արապի լեզուն եւ պատմէր զտնօրինական տեղիսն Քրիստոսի եւ զլոյսն որ ի Գերեզմանէն ելանէ յաւուր Ճրագալուցին, եւ ասէ թէ Հաւատ նոցա է ստոյգ¹⁾ եւ ոչ մեր: Եւ զայս

1) ստուգ.